ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ 1949 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԺՆԵՎԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ III) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 15 փետրվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող եւ զեկուցող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2005 թվականի դեկտեմբերի 8-ին ստորագրված՝ 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնեւի կոնվենցիաների լրացուցիչ տարբերակիչ խորհրդանշանի ընդունման մասին լրացուցիչ արձանագրության մեջ (Արձանագրություն III) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 6 դեկտեմբերի 2010թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Կիրակոսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով

Լրացուցիչ արձանագրությունը (Արձանագրություն III) եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնեւի կոնվենցիաների լրացուցիչ տարբերակիչ խորհրդանշանի ընդունման մասին լրացուցիչ արձանագրությունը (Արձանագրություն III) ստորագրվել է 2005թ. դեկտեմբերի 8-ին՝ Ժնեւում:

Երրորդ արձանագրության նպատակը 1949թ. օգոստոսի 12-ի Ժնեւի կոնվենցիաներով նախատեսված՝ պաշտպանական եւ տարբերանշման նպատակներով օգտագործվող՝ Կարմիր խաչի, Կարմիր մահիկի, Կարմիր առյուծի եւ արեւի տարբերակիչ խորհրդանշանների հետ մեկտեղ, լրացուցիչ խորհրդանշանի՝ «Երրորդ արձանագրության խորհրդանշանի» ստեղծումն է՝ դրանց պաշտպանական արժեքը եւ համընդգրկուն բնույթն ուժեղացնելու համար:

Լրացուցիչ տարբերակիչ խորհրդանշանը կազմված է ճերմակ ֆոնի վրա պատկերված եւ իր գագաթի վրա կանգնած կարմիր շրջանակով քառակուսուց:

Երրորդ արձանագրությունը հաստատում եւ լրացնում է 1949թ. օգոստոսի 12-ի Ժնեւի չորս կոնվենցիաների եւ, համապատասխան դեպքերում, դրանց՝ 1977թ. հունիսի 8-ի երկու Լրացուցիչ արձանագրությունների դրույթները, որոնք վերաբերում են տարբերակիչ խորհրդանշաններին, այն է՝ Կարմիր խաչին, Կարմիր մահիկին, Կարմիր առյուծին եւ արեւին, եւ կիրառվում է այն նույն իրավիճակներում, երբ կիրառվում են այդ դրույթները:

Երրորդ արձանագրությունը լրացուցիչ տարբերակիչ խորհրդանշանը ճանաչում է որպես Ժնեւի կոնվենցիաների տարբերակիչ խորհրդանշանները լրացնող եւ միեւնույն նպատակներով կիրառելի: Ըստ Երրորդ արձանագրության՝ տարբերակիչ խորհրդանշաններն օգտվում են միեւնույն կարգավիճակից:

Երրորդ արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, պարտավորվում է.

- հարգել Երրորդ արձանագրության դրույթները եւ ապահովել դրա նկատմամբ հարգանքը ցանկացած հանգամանքում,

- ապահովել, որպեսզի Երրորդ արձանագրության խորհրդանշանի օգտագործման պայմանները եւ դրա նկատմամբ հարգալից վերաբերմունքը եւ Ժնեւի կոնվենցիաներով ու, համապատասխան դեպքերում, դրանց՝ 1977թ. Լրացուցիչ

արձանագրություններով սահմանված տարբերակիչ խորհրդանշանների նկատմամբ կիրառելի պայմանները նույնական լինեն,

- ապահովել, որպեսզի իր զինված ուժերի բժշկական եւ կրոնական ծառայությունները, առանց վնաս հասցնելու այն խորհրդանշաններին, որոնք օգտագործում են ներկա պահին, կարողանան ժամանակավորապես օգտագործել Ժնեւի կոնվենցիաների տարբերակիչ խորհրդանշաններից ցանկացածը, եթե դա կարող է ուժեղացնել իրենց պաշտպանությունը,

- ապահովել, որպեսզի ՀՀ ազգային ընկերությունները, որոնք կորոշեն օգտագործել Երրորդ արձանագրության խորհրդանշանը, ՀՀ ազգային օրենսդրության համաձայն խորհրդանշանն օգտագործելիս կարողանան տարբերանշման նպատակներով դրանում ներառել՝ Ժնեւի կոնվենցիաներով ճանաչված տարբերակիչ խորհրդանշաններից որեւէ մեկը կամ այդ խորհրդանշանների համակցությունը, կամ մեկ այլ խորհրդանշան, որն արդեն իսկ փաստացի օգտագործում է Հայաստանի Հանրապետությունը, եւ որի մասին ավանդապահի միջոցով մինչեւ Երրորդ արձանագրության ընդունումն իրազեկվել են մյուս մասնակից պետությունները եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեն,

- ապահովել, որպեսզի ՀՀ ազգային ընկերությունները, բացառիկ դեպքերում, ՀՀ ազգային օրենսդրությանը համապատասխան եւ իրենց աշխատանքը դյուրացնելու նպատակով, կարողանան ժամանակավորապես օգտագործել Երրորդ արձանագրության 2-րդ հոդվածում հիշատակված տարբերակիչ խորհրդանշանը,

- ապահովել, որպեսզի Ժնեւի կոնվենցիաների եւ, համապատասխան դեպքերում, 1977թ. Լրացուցիչ արձանագրությունների այն դրույթները, որոնք վերաբերում են տարբերակիչ խորհրդանշանների անօրինական օգտագործման կանխարգելմանը եւ պատժին, հավասարապես կիրառվեն Երրորդ արձանագրության խորհրդանշանի նկատմամբ: Մասնավորապես, ձեռնարկել միջոցներ, որոնք անհրաժեշտ են Երրորդ արձանագրության 1-ին եւ 2-րդ հոդվածներում հիշատակված տարբերակիչ խորհրդանշանների եւ դրանց անվանումների՝ ցանկացած ժամանակ ցանկացած անօրինական օգտագործումը կանխարգելելու եւ պատժելու համար, ներառյալ՝ ոչ պատշաճ օգտագործումը եւ դրանց նմանակումը հանդիսացող ցանկացած նշանի եւ անվանման օգտագործումը,

- թույլատրել նրանց, ովքեր նախկինում օգտագործել են Երրորդ արձանագրության խորհրդանշանը կամ դրա նմանակումը հանդիսացող ցանկացած

այլ նշան, շարունակել օգտագործել այդ խորհրդանշանը՝ պայմանով, որ զինված ընդհարման ժամանակ այդ խորհրդանշանի օգտագործումը տպավորություն չի ստեղծի, թե այն տրամադրում է Ժնեւի կոնվենցիաներով, եւ, համապատասխան դեպքերում, 1977թ. Լրացուցիչ արձանագրություններով նախատեսված պաշտպանություն, եւ պայմանով, որ նման օգտագործման իրավունքը ձեռք է բերվել մինչեւ Երրորդ արձանագրության ընդունումը,

- հնարավորինս լայնորեն տարածել Երրորդ արձանագրությունն ինչպես խաղաղ, այնպես էլ զինված ընդհարումների ժամանակ, եւ, մասնավորապես, դրա ուսումնասիրումը ներառել ռազմական պատրաստության ծրագրերում եւ խրախուսել դրա ուսումնասիրումը քաղաքացիական բնակչության կողմից, որպեսզի այս փաստաթուղթը հայտնի դառնա ՀՀ զինված ուժերին եւ քաղաքացիական բնակչությանը,

- Երրորդ արձանագրության վավերագրերն ի պահ հանձնել Շվեյցարիայի դաշնային խորհրդին՝ Ժնեւի կոնվենցիաների եւ 1977թ. Լրացուցիչ արձանագրությունների ավանդապահին:

Երրորդ արձանագրությունն ունի իր անբաժանելի մասը կազմող հավելված, որում տեղադրված է «Երրորդ արձանագրության խորհրդանշանի» պատկերը, որը պետք է օգտագործվի սույն Արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ կետի եւ 3-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2005 թվականի դեկտեմբերի 8-ին ստորագրված՝ 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնեւի կոնվենցիաների լրացուցիչ տարբերակիչ խորհրդանշանի ընդունման մասին լրացուցիչ արձանագրության մեջ (Արձանագրություն III) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

15 փետրվարի 2011 թվականի
ՍԴՈ-937